Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արարատի մարզի <<Ոստանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (4 դասաժամ տղաների խումբ),դասվար (ըստ դասաբաշխման), ՆԶՊ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) <<հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00} - ը, բացի կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 9-ին ժամը 15^{00} -ին ՀՀ Արարատի մարզի Ոստանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0235) 2-30-59 , (093) 80-60-55 հեռախոսահամարներով: